ԼՈՒԹՖ, ա. սիրալիրութիւն, ազնւութիւն:

ԼՈՒԿ,տես լուք:

ԼՈՒՍՆԵԿԱՆ, մ. հ. լուսընկան, լուսինը:

ԼՈՒՍՆԻԿԱՆ, տես ԼՈՒՍՆԵԿԱՆ:

ԼՈՒՍՈՒՆ (աստղեր), Ա. բ., լուսաւոր, լուսավառ:

ԼՈՒՍՈՒՆԿԱՅ, մ. հ. տես ԼՈՒՍՆԵԿԱՆ:

ԼՈՒՐՋ, ԼՐՋՈՒԿ, մ. հ. , բաց կապոյտ:

ԼՈՒՔ, տես ԼՕՔ:

ԼՕՀ. ա. լoh, ուս: Սիրուն ակունք լինէի, քո լoհին մէջընն լոյս տայի, ուսիդ փայլէի ?:

ԼՕՔ, մ. հ., լոկ, միայն: Տես եւ ԼՈՒԿ, ԼՈՒՔ, ԼԱՒԿ:

Խ .

ԽԱԲԴԱՆ, Ա. բ. թ. քաֆթան, մետաքսէ ներքնահանդերձ,

պատուոյ զգեստ զոր արեւելեան իշխանները կ՚ընթայեն օտար դեսպաններու:

ԽԱՁԱԼ, տես ԽԷՁԷԼ:

ԽԱԹՐ, Ա. բ. , ա. խաթր, e'gard, յարգանք, ակնածանք:

ԽԱԼԱՍ, ա. խալիս, զուտ, անխառն. խալաս ոսկի, զուտ ոսկի. ըռանա խալաս, անխառն գեղեցիկ:

ԽԱԼԱՏ, ա. դալաթ, պակասութիւն, սխալ:

ԽԱԼԽ, ա. խալք, ժողովուրդ, հասարակութիւն:

ԽԱԼԻՍԵԼ կամ ԽԱԼԸՍԵԼ, Ա. բ., ազատել, փրկել, (ա. խալաս բառէն):

ԽԱԼՎԱԹ, Ա. բ. ա. առանձնացում, մենաւոր տեղ մը քաշուիլ. մեկուսի վայր մը:

ԽԱՀՐ, Ա. բ. , ա. ղահր, բարկութիւն, բռնութիւն:

ԽԱՀՐԸՄԱՆ. Ա. բ. թ. քահրաման, հերոս, ուժեղ մարդ, քաջարի, դիւցազնական:

ԽԱՄ, պ. հում, հասարակ, կոշտ:

ԽԱՄԱՁ, ա. ղամազ, մատնող:

ԽԱՄԻՇ, Ա. բ., թ. քամըշ, եղէգ:

ԽԱՅԵԱԼ, ԽԱՅԱԼ, մ. հ., ա. խայալ, երազ, ցնորք, երեւակայութիւն: Խայեալ կ՚անէ, կ՚երազէ, կ՚երեւակայէ:

ԽԱՆ, Ա. բ., պ. եւ ա., պանդոկի:

ԽԱՆՁԱՐ, մ. հ., պ. խան – զար, իշխանի ծաղիկ. իշխանական ծաղիկ. երեսդ ի խանզար նմանակ:

ԽԱՆՂԱԼ, Ա. բ., թ. քանկալ, գալար, պարոյր, ոլոր. երկու խանդալ մանեցի, երկու կարժ մանեցի:

ԽԱՆՃԻ, Ա. բ., թ. պանդոկապետ: